ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-6-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար **բժշկական նշանակության ապրանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԷԱՃԱՊՁԲ-2025/16-6-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի դեկտեմբերի 20-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2024 թվականի դեկտեմբերի 23-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում**

Հարգելի գործընկեր թիվ 77 չափաբաժնով նախատեսված ստենտի համար պահանջել եք ծագման երկրի սերտիֆիկատ, մինչդեռ օրենսդրությամբ ծագման երկրի սերտիֆիկատի պահանջը վերաբերում է օրգանիզմում 30 օրվանից ավել մնացող իմպլանտներին, մասնավորապես համաձայն ՀՕ-325-Ն «Բնակչության բժշկական օգնության եվ սպասարկման մասին» ՀՀ Օրենքի 2-րդ հոդվածի և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 68-րդ կետի՝ ներպատվաստվող (իմպլանտացվող) բժշկական արտադրատեսակներ՝ այն ինվազիվ բժշկական արտադրատեսակները, այդ թվում՝ մասամբ կամ ամբողջությամբ օրգանիզմում ներծծվող, որոնք վիրաբուժական միջամտության միջոցով ամբողջությամբ ներմուծվում են մարդու մարմին կամ փոխարինում են էպիթելային մակերեսին կամ աչքի մակերեսին, և որոնք վիրաբուժական ընթացակարգից հետո մնում են ներմուծման տեղում, ինչպես նաև այն բժշկական արտադրատեսակները, որոնք վիրաբուժական միջամտության միջոցով մասամբ ներմուծվում են մարդու մարմին, և որոնք վիրաբուժական ընթացակարգից հետո ավելի քան 30 օր մնում են ներմուծման տեղում»: Ինչպես նաև նույն օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում պետության երաշխավորած անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման դեպքերում մատուցվող նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայությունների համար օգտագործվող ներպատվաստվող (իմպլանտացվող) բժշկական արտադրատեսակների ձեռքբերումն իրականացվում է արտադրողի կողմից ներկայացվող համապատասխանության հավաստագրի, ավտորիզացիոն նամակի (երաշխիքային-լիազոր նամակի) և ծագման սերտիֆիկատի առկայության դեպքում»: Տվյալ դեպքում միզածորանային ստենտը օրգանիզմում չի մնում 30

օրից ավելի: Խնդրում ենք դիտարկել համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկը:

Պարզաբանում

Հարգելի գործընկեր, տեղեկացնում ենք, որ «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 77-րդ չափաբաժնի մասով պահանջվել է ներկայացնել ծագման երկրի սերտիֆիկատ, քանի որ կախված հիվանդի ախտորոշումից և/կամ բուժման ընթացքից, վիրաբուժական միջամտության եղանակով տեղադրված միզածորանային ստենտը հիմնականում մնում է օրգանիզմում 30 օրից ավելի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումները համակարգող Աիդա Համբարձումյանին:

Հեռախոս 091-606942

Էլ. փոստ a.hambardzumyan@keystone.am

**«ԷԱՃԱՊՁԲ-2025/16-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով**

Հանձնաժողովի

Նախագահ` ______________ Ա. Հակոբյան

Անդամներ` ______________ Կ.Մկրտչյան

______________ Հ. Սարգսյան

Քարտուղար` ______________ Ա.Համբարձումյան

**ОБЪЯВЛЕНИЕ**

**о разъяснении приглашения**

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№1 от 23 декабря 2024 года
и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Оценочная комиссия закупочной процедуры с кодом ԷԱՃԱՊՁԲ-2025/16-6-ԵՊԲՀ, организованной для приобретения товаров медицинского назначения для нужд «Ереванского государственного медицинского университета имени Мхитара Гераци», ниже представляет вопрос, полученный 20 декабря 2024 года по данному приглашению с тем же кодом, а также разъяснение, предоставленное 23 декабря 2024 года.

Вопрос

Уважаемый коллега, для стента, предусмотренного в пункте 77, вы запросили сертификат страны происхождения, в то время как законодательством требование о сертификате страны происхождения касается имплантатов, остающихся в организме более 30 дней. В частности, согласно статье 2 Закона РА «О медицинской помощи и обслуживании населения» (№325-Н) и статье 2, часть 1, пункта 68 Закона РА «О медицинской помощи и обслуживании населения» от 4 марта 1996 года, это касается имплантируемых медицинских изделий, включая инвазивные медицинские изделия, которые, в том числе, частично или полностью поглощаются в организме и которые полностью вводятся в тело человека через хирургическое вмешательство или заменяют эпителиальную поверхность или поверхность глаза и остаются на месте введения после хирургической процедуры, а также те медицинские изделия, которые частично вводятся в тело человека через хирургическое вмешательство и остаются на месте введения более 30 дней после процедуры. Также, согласно части 2 статьи 44 того же закона, «при закупке имплантируемых медицинских изделий, используемых в медицинских услугах с применением новейших и дорогостоящих технологий, предоставляемых бесплатно или на льготных условиях в рамках программ по охране и улучшению здоровья населения за счет государственного бюджета, приобретение таких изделий осуществляется при наличии сертификата соответствия, авторизационного письма (гарантийного-полномочного письма) и сертификата происхождения, представленных производителем». В данном случае мочеточниковый стент не остается в организме более 30 дней. Просим рассмотреть предложение о внесении соответствующих изменений

Разъяснение

Уважаемый коллега, сообщаем, что в рамках закупочной процедуры с кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-6-ԵՊԲՀ» по пункту 77 было требование представить сертификат страны происхождения, так как в зависимости от диагноза пациента и/или хода лечения, мочеточниковый стент, установленный хирургическим методом, обычно остается в организме более 30 дней.

Для получения дополнительной информации в связи с уведомлением вы можете обратиться к

координатору закупок Аида Амбарцумян

Телефон: 091-606942

Эл. почта почта: a.hambardzumyan@keystone.am

Оценочная комиссия по котировке цен по процедуре закупа ԷԱՃԱՊՁԲ-2025/16-6-ԵՊԲՀ

| | | |
|---|---|---|
| Председатель комиссии | (подпись) | Ани Акопян |
| Члены комиссии | (подпись) | Карине Мкртчян |
| | (подпись) | Асмик Саркисян |
| Секретарь комиссии | (подпись) | Аида Амбардзумян |